



Հ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ

ԿՈՄԻՏԱՍԻՆ ՀԵՏ\*

VI.—Աճճկալից գարուն

1915-ի տարին մտանք հոգեբով և երկյուզով բեռնավոր:

Գավառներեն անընդհատ սրտաճմլիկ լուրեր կտեղային պատրիարքարան, իսկ պատրիարքն ու իր շուրջիները անզոր էին որևէ դարման գտնելու: Թաքրիրները զորս պատրիարքարանը կներկայացներ Բարձրագույն Դուռ այս կամ այն դեպքին մասին՝ հեզանքով կզիմավորվեին: Կառավարությունը սուտ խենդ կձևանար, և կհերքեր, դիվային հրքճվանքով մը, զուլումները որոնք կմատնանշվեին իրեն:

Պոլիս սարսուռի պահ մը պարեցավ երբոր լսեց Սահակ վարդապետ Օդապաշյանի սպանությունը: Դժբախտ հոգևորականը որ արհամարհելով ամեն վտանգ քաջություն ունեցեր էր ստանձնելու Երզնկայի առաջնորդությունը և իր թեմը կերթար, սպանվեր էր Սուշեհճի մոտերը նոր տարվան գիշերը, 1914 դեկտ. 18/31-ին: Ոճիրը տեղի ունեցած էր կանխամտածությունմբ, և հրահանգված էր պետական իշխանությունց կողմե՝ սարսափ սփռելու համար հայոց մեջ: Սահակ վարդապետ առաջին զոհը կըլլար հայաջինջ եղեռնին, ու սուգով կբանար տարին:

Մյուս կողմե ճակատեն հասնող լուրերը կթունավորեին մթնոլորտը Պոլսո մեջ: Բ. Դուռը այլևս չէր կրնար զսպել կատաղությունը, ու արդեն իսկ կսպառնար աչ ու

ձախ: Վարդգես ամեն անգամ սարսափով կմեկներ Թալեաթի ջովեն՝ երբ անոր դիմումի կերթար այս կամ այն հարցին համար: Անոր աչքերը միշտ լեցուն էին թուլնով, և բառերը՝ սպառնալիքով:

Քանի մը աննշան հաջողություններ ճակատին վրա՝ ավելի ևս անբարտավան դարձուցած էին թուրքերը, և մայրաքաղաքը ցնծութենեն կխայտար ու կդրոշադարգվեր տեղի-անտեղի: Բայց ջախջախիչ պարտությունը, զոր էնվեր 1915 հունվար 15-ին կրեր էր Սարըղամիշի մեջ պահ մը ահուղողի մատնեց հանկարծ թուրքերը:

Քիչ հետո անախորժ ուրիշ լուր մը պիտի ջղայնացներ զանոնք: Զախողությունմբ վերջացած էր անոնց փորձը Սուեզը անցնելու փետրվար 2—3-ին, —արկածախնդրություն որուն վրա շատ հույսեր դրած էին, իրենք ու իրենց զինակից գերմանները:

Եվ սակայն թույն կվազեր իրենց երեսն երբ հայ մը իրենց դեմն ելլեր: Ոչ մեկ տարակույս չունեինք որ դավ մը կնյութվի մեզ դեմ մութին մեջ: Գիտեինք, որ Մյուրաֆաայի միլլեին և քեշիշաքը մախսաեսն աշխուժացած են այդ օրերուն, առաջինը միջոցներ հայթայթելու, և երկրորդը շեքեներ մարդելու համար: Հայուն դեմ միայն կրնային ըլլալ բոլոր այդ պատրաստությունները, թեև թուրքերը կտարածայնեին թե Կովկասի իրենց եղբայրները ազատելու համար էին լոկ ստոնք: Ու որքան դրամ հավաքեցին նախ հայերեն, որպեսզի հայուն դրամով զինեն իր դահիճները: Ոչ նվազ սոսկումով լսեր էինք, հավաստի աղբյուրներե, թե գաղտնի ցանկեր հաղորդված էին ոստիկանատուններուն, զոց պահարաններու մեջ, որոնք պիտի բացվեին երբոր հրամանը գար վերեն:

\* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1965 թվականի № Ա-ից, Ե-ժ-ից, 1966 թվականի № Ա-2-ից, Ը-ժ-ից, 1967 թվականի № Գ-2-ից և 1968 թվականի Ա-Բ-ից:

Եվ սակայն մայրաքաղաքը կերպարանափոխ եղավ մեկն: 1915 մարտ 18-ին լուր տարածվեցավ Պոլիս որ անգլիական և ֆրանսիական տորմիդները Դարդանեղը կծծեն: Քրիստոնյաները պահ մը սիրտ առին. անոնց երեսին վրա կզգացվեք բացառիկ ցնծութիւն մը, զոր չէին կրնար նույնիսկ պարտկել: Թուրքերուն մեջ ալ քիչ չէին խայտացողները. անոնցմէ շատերուն համար ևս տոնական օր մը պիտի ըլլար եթէ Պոլսո ջուրերը հասնեին դաշնակից մարտանավերը: Իթիհատեն ու գերմանեն գարշողները շատ էին նաև թուրքերուն մեջ:

Ու հա, այդ օրերուն է որ խուճապի մատնվեցան պետական շրջանակները մոտալուտ աղետի մը վտանգին առջև: Անազուտ փոխադրեցին իսկույն ինչ որ անպայման կրկնվէ պետք էր, և Հայդար փաշայի մեջ պատրաստ պահեցին կառախուճերը՝ երկրին ներսերը տանելու համար Մուլթանն ու դիվանագիտական մարմինը, նախարարական կազմին հետ մեկտեղ:

Կոմիտասը կհիշեմ ցնծութիւն այդ օրերուն: Ոգևորված կթվեք ինքն ալ, բայց զգուշ կմնար իր ուրախութիւնը պոռթկալու համար: Հայ կյանքը սկսավ կրկին խլրտիլ, պահ մը կարծես մոռցած իր հոգերն ու կարիքները: Սփոփանքի վայրկյան մը եղավ բոլորիս համար, ցերեկույթը որ 1915 մարտ 23-ին, Ջատկին երկրորդ օրը տեղի ունեցավ Թեմթոնիայի սրահին մեջ, և վերջին առիթը ուր մեր հոգին կգինովնար Կոմիտասի անուշ երգերով:

Մեր ցնծութիւնը խորտակվեցավ մեկն, երբ սև շուկը պտտիլ սկսավ մայրաքաղաքին մեջ: Դաշնակից տորմիդները, քանի մը մարտանավ զոհ տալիս հետո նեղուցին առջև, կոխվը լքեք և ելեք գացեք էին: Մթնոլորտը դարձյալ կսևնար ճիշտ այն պահուն՝ երբ հուլիսի ալիք մը սփռվեք էր տունն տուն, և երբ, Երիտասարդ-թուրքերը, իրենց օրերը համրված կսեպեին իրենք իսկ:

Հիմա, ազատած Դարդանեղի վտանգն, սկսան ավելի ամբարտավան ու ավելի աններող դառնալ:

**VII.—Կոմիտաս և իր վերջին պատարագը**

Կոմիտաս այլապես ալ կպահեր իր կորովը: Ան չէր լքած իր գործունեութիւնը: Նոր մշակումն մը կանցըներ իր պատարագը՝ որպեսզի զայն երգել տա 1915 զատկին: Հակառակ դժնդակ պայմաններուն զորս ստեղծած էին դեպքերը, և որոնք ցիրուցան ըրած էին իր երգիչները, ան հաջողեցավ այնուամենայնիւ խումբ մը կազմել ու մարդել:

Հիմա խոսքը տանք Միհրան Թումաճանին՝

որպեսզի մեզի պատմե Կոմիտասի այդ վերջին հանդգնութիւնը:

«Մեծ պատերազմի տարին էր: Պոլիս...: Ամեն կողմ՝ իրարանցում, շփոթութիւն և վախ...»

Մանավանդ երիտասարդներուն համար, որ զինվոր պիտի երթային: Այն ատենվան օրենքին համաձայն ուսուցիչներն ոմանք, ինչպես նաև եկեղեցական հաստատութիւնց ծառայողներ, իբրև Տիպագ, և Պոլսո Դալաթիո եկեղեցիի դպրաց դասն վեց-յոթը հոգի ևս, զինվոր կանչվել և զատ մնացած էին:

Դալաթիո դպրաց դասու այս ախառները, սակայն, սովորական ըմբռնումով տիրացութիւն ընողներ չէին: Անոնք տարիներն ի վեր Կոմիտաս վարդապետի շուրջ բոլորված և անոր աշխատանքին նվիրյալներ էին, որոնց մեջ էին նաև իր երաժշտական դասընթացքին հետևող հինգ սաները, որոնք այդ տարին իսկ Փարիզ պիտի մեկնեին ուսանելու, բայց պատերազմին պատճառով Պոլիս մնացին:

Այս խառնաշփոթ պարագաներուն տակ, տիպեոսները և իրենց ընկերները պարտաւճիտ մը էին, երևույթներ փրկելու համար, ամեն հինգշաբթի և կիրակի օրեր՝ ի պաշտոնն մասնակցիլ եկեղեցական արարողութիւնց:

...Ուստի, ստեղծված այս անբաղձալի կացութիւն մեջ, շուկելով լճանալ՝ իբրև լոկ տիրացու և կերպով մըն ալ իրենց երաժշտական ճաշակը հագեցնելու փափաքով՝ իր սաներն ու աշակերտները օր մը, իրենց այս մտահոգութիւնները կջանային արտահայտել Կոմիտաս վարդապետին: Ան մեկ կողմն ուշադրութեամբ մտիկ կընեք, մյուս կողմն ալ ձեռքին վրա ունեցած կոծիժը կբերեք: Այս մտամոփոփ վիճակին մեջն, իսկույն ոտքի կանգնելով և «Կայ յերթնեքելներ, վայ յըսելով հանդիպողին ուսին, ասդին անդին՝ բռունցքի կակուղիկ հարվածներ կիջեցնեք, կատակելով ու խնդալով:

...Արգարև, Կոմիտաս վարդապետ մեծ խանդավառութեամբ սկսավ պատարագի երգեցողութիւնները շարադրել, իր այս երգչախումբին երաժշտական տարողութիւնը նկատի ունենալով: Ցերեկը գիշերին խառնելով փոքրիկ օրկանին առջև գլուխը ծռած մոմի մը պլպլացող լույսին տակ, ան գրեց ու ջընջեց, մինչև որ լսեց հինավուրց այս երգերուն մեջ իր որոնած հնավանդ ձայները...:

Նույնքան խանդավառ, իր աշակերտները, — թիվով քսանհինգ-երեսուն, — ամեն շաբաթ հեհնէ կաճապարեին հասնիլ Դալաթիո եկեղեցիին հարակից մեկ սենյակը, սերտելու և լսելու այս պարզ եղանակներուն մեջ թաքնված ձայներու զմայլելի ներդաշնակութիւնները:

...Այսպես երկու կամ երեք ամսվան մեջ,

պատարագի խմբական մասը ամբողջովին վերծանված էր արդեն: Կմնար սարկավագին և քահանային բաժինները միացնելու ընդհանուր փորձը:

Այդ տարվան Մաղկաղարդի կիրակին, — հավարտ եկեղեցական արարողությունց, — երգչախումբը ամբողջությամբ պիտի հավաքվեր Կեդրոնական վարժարանի ամփոթատրոնը, վերջին լրիվ փորձը կատարելու համար:

Պատարագի ամբողջ փորձը, — սարկավագին և քահանային բաժիններով — հանդարտորեն կրնա ներգրավել Վերջավորության մոտ Գոհանամբ գլխին Տէրի սկզբնական երկու մասերը, մենեբրգ և խմբերգ զմայելի կերպով շաղախված կերպով երգելու և մինչ մենեբրգի ձայնը «Եվ կյանք» ըսելով կրարծրանար ու կտարածվեր որոտագին, խումբը ձայներու հաջորդական ալիքներուն մեջ սայթաքեցավ, դեղեկեցավ...:

Սակայն Կոմիտաս վարդապետ, — որ անսահման վատահույսություն ուներ իր երգչախումբի երգելու կարողության վրա — սկսավ կրկին երգել տալ այդ մասը:

Դարձյալ տատանում...:

Այս անգամ՝ հեղինակը վախճուցեց.  
— Ի՞նչ է պատահել... գինո՞ւ վ եր...:

Արդարև, այդ կեսօրվան ճաշը պատրաստված էր... «ուտելիքով ու խմելիքով»: Կոմիտաս վարդապետ, տղոց զմեքերուն շեշտակի նայելով՝ կարծես թե ամեն բան կարդացած էր: Իսկույն շրթունքները մեկ կողմ ծռած և գլուխը ետ ու առաջ ճորճորելով, կատակեց. — Մի բանի վայրկյան հանգիստ...:

...Փոքրիկ դադարի մը ետք մթնոլորտը փոխված էր: Զգաստությունը տիրական էր՝ երբ Կոմիտաս վարդապետ, դարձյալ կատակով, կրսեր.

— Սկսինք...: Սկիզբեն մինչև վերջը... մեկ շունչով... առանց «Եվ կյանք»-ին վրա կանգ առնելու: Հասկացա՞ք:

Եվ խումբը սկսավ...: Ոգեզեղումը կատարյալ ըլլալու էր, բանի որ ամեն ձայն ու խաղ կարգով ու հեշտությամբ կսահեր: «Գոհանամբ զբէն Տէր»-ի դուռը կրացվեր Կոմիտասի աննման երգիչին՝ Հայկին ջինջ ու պայծառ հնչյուններով, որուն կրնկերանար խումբը աղերսական արձագանգներով.

— «Որ կերակրեցեք զմեզ յանմահական սեղանոյ քո...»:

...Այդ տարվան ճրագալույցի իրիկունը և Զատիկվան առավոտը, վարդապետի հրաշափառ շունչով օծանված այս հինավուրց երգերու պատարագը մատուցվեցավ Ղալաթի եկեղեցիի հնաբույր կամարներուն տակ, առաջին անգամ ըլլալով...:

VIII.—Կոմիտաս «Թյուրք օճաղը»-ի մեջ

Չարաշուք այն թվականն ասդին երբ Երիտասարդ-թուրքերը համաթրքութունը որդեգրեցին իբրև ազգային իդեալ, իրենց նոր ցնորբը իրականացնելու, և առաջին հերթին զայն ժողովրդականացնելու համար, կարգ մը բջիջներ ստեղծեցին:

Այդ բջիջներն մեկը Թյուրք-Օճաղն էր, ուր հավաքված թուրք մտավորականությունը ընտրանին՝ երազ կհչուսեր թուրանին համար, և կփորձեր սերունդ մը հասցնել իր կողքին՝ զանոնք ևս կապելու համար իր ցնորբներուն:

Հաճախ ալ հանդես կսարքեր ան՝ ավելի լայն խավերու համար, նպատակ ունենալով անոնց փառաբանել թուրք հոգին և իր ստեղծագործությունները, Մեհմեդ էմին քերթիված կկարդար, Համդուլլահ Սոյահի և Ջիա Ալթ ճառ կխոսներին, ու կերպվին երգեր ալ՝ որոնք իբրև թե հարազատ երգերն էին թուրքերուն:

Ան հույս դրած էր Կոմիտասին վրա ալ՝ թուրք հարազատ երաժշտություն մը ստեղծելու իր ճիգերուն մեջ: Ու զայն հրավիրեց մաս առնելու իր մեկ հանդեսին, որ տեղի պիտի ունենար նույն այդ մարտ ամսվան վերջին օրերուն:

Թյուրք Օճաղիի նույն այդ հանդեսին հայեր չեն եղած գրեթե, բացի բանի մը հոգի միայն: Անոնցմե մեկը, բժիշկ Հովհաննես Մանուկյան, կրցած է երկու տոմսակ ձարել, իրեն և ուրիշ հայ բարեկամի մը համար, շնորհիվ հաճոյակատարությունը թուրք բժշկի մը, որ իրեն հետ միասին կծառայեր Մալթեմիեի հիվանդանոցը և որ կապեր ուներ Թյուրք-Օճաղիի հետ:

Հուշերը զոր մեր տրամագրության տակ կզեն բժիշկ Մանուկյան, այն էջերն են որ մեզ կպատմեն Կոմիտասի վերջին օրերը՝ ճամբա ելլելի առաջ դեպի Գողգոթա:

«Տակավին կես ժամ կա: Օճաղին առջև նախարարական ինքնաշարժեր, իշխանական փառաշուք կառքեր մեկիկ մեկիկ կանգ կառնեն, և թուրքերու հատուկ մասնավոր հյուրընկալությամբ ներս կառաջնորդվին: Տոքթ. Նեշաթ պեյ մեզի աչք կընեն՝ իրեն կհետևինք անխուս և կամացուկ մը ներս կսպորդինք, ուր երկու աթոռներ ալ մեզի տրամագրվեցան. լայն շունչ մը առինք ու սկսանք վայրկյանները համրել:

Տասը վայրկյան կա և երգահանդեսը պիտի սկսի. ի՞նչ դժվար բան է եղեր սպասումը:

Սրահը ծայրի ծայր լեցված է ընտիր բազմություններ: Գահաժառանգ իշխանը, բովրժալեաթ պեյ, արքայազուն իշխաններ, ոսկեճամուկ համագրեւտներով բարձրաստի-

ճան սպաններ, շեյխուլիսլամության ներկայացուցիչներ, փաթթոցավոր գիտնականներ և զրական դեմքեր:

Հանդիսավոր վայրկյանը հասավ: Սեմին վրա երևցան Թուրք Օճաղըի նախագահ Համտուլլահ Սուպհի պեյ և Կոմիտաս վարդապետ:

Ես վարդապետը նախապես կճանչնայի. բայց ան բոլորովին փոխված էր. մեղրամոմի պես տփզույն դեմքին վրա մասնավոր թախիծ մը կար որ իր հայ հոգևորականի սև սքեմին մեջ նոր օրերու առաքյալի մը սրբությունը և վեհությունը ուներ:

Օրվան նախագահ Համտուլլահ Սուպհի պեյ բնիկ ակնցի էր: Հայաստանի հողով, ջուրով անած այս թուրքը իր գեղեցիկ արտաքինին կմիացնեք նաև հոետորական կարողություն ու այն ժամանակ մատի վրա համրվող մտավորականներեն առաջինն էր: Հուզված ձայնով մը Կոմիտաս վարդապետը ներկայացնեցով բառ առ բառ հետևյալ կերպով խոսեցավ:

— Այս հայ հոգևորականը տարիներու տքնաջան աշխատության և իր պրպտող մտքին շնորհիվ հայ երգին և հայ երաժշտության նոր թռիչք տված է: Անատուրի զավակ Կոմիտաս վարդապետ, — հակառակ իր աստվածաբանական և համալսարանական կրթություն, — արհամարհելով պերճանք, ճոխություն և պաշտոն, նետվեցավ դեպի հայ գյուղերը, և հայ գեղջուկին հոգեկան ներշնչումներուն և ապրումներուն իրական արտահայտությունն եղող հայ երգը մեկիկ մեկիկ դասավորեց և անոնց այնպիսի կենդանի շունչ և ներդաշնակություն տվավ որ այսօր հայ երգը հայ մշակույթի ներկայանալի գանձերեն մին կհանդիսանա:

Հայրենակիցներ, մենք՝ թուրքերս ալ ունինք բարձրաստիճան խլեմաներ, որոնցմե շատերը մետրեկներու մեղկ և ծուլ կյանքին վարժված ըլլալով՝ շեն ուզեր իրենց սահմանափակ կյանքեն դուրս նետվիլ: Այս վարդապետին պես անոնք ալ կրնան իրենց ազգին օգտակար ըլլալ. պրպտող միտք մը եթե թուրք գյուղերը շրջագայի, ո՛վ գիտե ժողովրդական երգերու ինչպիսի թանկագին գանձերու պիտի հանդիպի, որոնք թուրք ցեղին զգալուն հոգիին և խորհող մտքին արժեքը ավելի պիտի բարձրացնեն:

Հետո ավելցուց. «Ճշմարտություն է, որքան ալ դուռն ըլլա ան, պետք է խոստովանիլ որ հայ ազգը դարերի ի վեր մեր մշակութային կյանքին մեջ իր հառաջապահի մասնավոր տեղը ունեցած է: Թուրքիո ո՛ր կողմն ալ երթաք, Անատուրի ո՛ր անկյունն ալ ըլլաք, հայ միտքը, հայ ստեղծագործ ձեռքը «հոս եմ» կրսե: Օրինակ կուզեք. Պոլսո սուլթանական պալատները մեյ մեկ գլուխ գործոց-

ներ են, հայ ճարտարապետության գեղեցիկ նմուշներ են: Դեպի երկինք բարձրացող մինարեներ ուր ամեն օր մուկզգիներ Ալլահ էֆպե կպոռա, շատերը հայ ստեղծագործ ձեռքերու մեյ մեկ կոթողներ են: Չեր սիրելիներու տապանաքարերը որոնք այնքան նրբություն ունեն, նորեն հայ վարպետներու գործերն են: Վանի նշանավոր գեղաճաշակ արժաթյա տուփերը որ օտարականներու անգամ հիացում կազդեն՝ հայ ոսկերչության արտադրություններն են:

Բժշկական համալսարանի հիմնադիրները և գիտական գիրքերու առաջին հեղինակները նորեն հայեր եղած են: Թուրք թատրոնը իր գոյությունը հայերուն կպարտի: Գերման հեղինակավոր գիտնական մը պատմագիտական իր մեկ գրքին մեջ երբոր կվերլուծե թուրքիո մեջ ապրող տարրերը, հայերու մասին կգովեստով կխոսի և հայը ավելի մոտիկ կգտնե հայ տարրին հետ ու կավելցնե. «Այս ժողովուրդը միջավայրին հարմարելու մասնավոր հատկություն մը ունի, և դժվար է շատ անգամ հայը թուրքեն զանազանել»: Ահա ասանկ ուշիմ և ընդունակ ազգի մը հետ միասին կապրինք որ մինչև հիմա ալ ամեն ազգի մեջ տիրապետող է»:

Երբոր այս խոսքերը կարտասաներ նախագահը, իր դեմքին վրա որոշ դառնություն մը կար, և կարծես ձայնը կոկորդին մեջ պիտի խեղդվեր: Բայց ինչ որ ըլլա այս վայրկյանիս աչքիս ավելի բարձրացավ այս թուրք մտավորականը որ թուրք ազգի փառաբանության սահմանված շենքի մը բեմին պատմական տվյալներով ճշմարտությունը կխոսեր, և չէր քաշվեր ըսելու թե մինչև այսօր հայերը շատ մը ճյուղերու մեջ տիրապետող են:

Ով գիտե Կոմիտաս վարդապետ ներքին ինչ հուզումներ ունեցավ, լսելով գնահատանքի խոսքերը իր ազգին ուղղյալ որուն մեջ ինքն ալ պատվաբեր բաժին մը ուներ:

Նախագահին բացման խոսքերեն հետո դաշնակին առջև անցավ Կոմիտաս վարդապետ և խորհրդավոր լուռության մեջ սկսավ երգել:

Ամենուն ուշադրությունը վարդապետին վրա էր. բոլորը հափշտակված մտիկ կունեին: Առաջին երգը՝ Կուուներ՝ երբոր լմնգավ, խելահեղ ծափահարություններ իրարու հացորդեցին. առինքնող մառնիսական հոսանք մը լեղուց սրահը որ հոգիե հոգի կթափանցեր. հանդիսականները իրարու մեռ հիագման աննաղկներ կփոխանդեին: Մանամանդ Հով աբեք սաբեք ջան և Կալի երգը այնօան հիանալի էին որ «մաաշալլահ, Աստված յար այք պահե» թուրքերեն բացազանչությունները օդը կթնդաղնեին:

Հայ երգը և հայ երգիչը իրենց փառքի գազաթնակետին վրա էին: Կոմիտասի ամեն

մեկ երգը կարծես աստվածային երաժշտություն մըն էր որ երկինքեն կու գար և գարնանային անուշ զեփյուտի մը նման հոգիները կվերանորոգեր: Երգերու ամբողջ տևողության ոգևորությունը աննկարագրելի էր: Վարդապետը անգամ մը ևս ցույց տված էր թե հայը իր մշակույթով և երգով պիտի ապրի և պետք է ապրի»:

Վարդան Ազկուլյան, Կոմիտասի խումբին երգիչներեն, որ նույնպես ներկա եղած էր անոր ելույթին թյուրք-օջաղիի մեջ, կպատմեին՝ և ուղղված իր մեկ նամակին մեջ թե ան նախ զրույց մը ըրավ աղճատ թուրքերենով մը, երգելով նաև մեջընդմեջ: Համդուլահ Սուրհի, այն օրերուն նախագահ թյուրք-Օջաղիի, կու լար այդ պահուն, գրեթե հեծկըլտալով:

Ըստ Կարո Ուշագլյանի պատմածին՝ Կոմիտաս թյուրք Օճաղը իր այդ դասախոսության ընթացքին երգած էր թրքական ժողովրդական երգեր, որոնցմե մեկը սա ծանոթ երգն էր.

Խարբուք եզլարը տար տըր կեշիլմեզ.  
Սաղուֆ տըր սուլարը յարսըզ իշիլմեզ<sup>12</sup>.  
(Խարբերդի ճամբաները նեղ են՝ շանցըն-վիր,  
Սառն են ջուրերը՝ շեն խմվիր առանց յարի):

«Չմոռնամ հոս հիշելու նաև որ Կոմիտաս երգած է «էկին հավասը»-ն ևս, որ շատ սիրած երգն էր ակնցիներուն.

Էկին վիրան օլմուշ պյուպյուլ յոթմեյար  
Պեյ աղամ դուրպեթտե խապե եկվմեյար:

Կարծես թե վարդապետը մարգարեական ներշնչումով երգած էր այդ երգը: Արդարև շատ շանցած իրապես «վիրան» պիտի դառնար Ակնը, և «պյուպյուլ»-ներուն տեղ այլևս բուերը պիտի երգեին միայն»<sup>13</sup>:

\*  
\* \*

Թյուրք-Օճաղիի այդ հանդիսության ներկա գտնված է, թուրք ուրիշ մտավորականներու հետ մեկտեղ, նաև համբավավոր այն թուրք գրագետուհին որ Խալիդե էգիբ հանրմն էր, կողակից նույնքան համբավավոր թուրք բժիշկի մը, տոբթ. Աղնան բեյի, Խալիդե հանրմ ծնած էր 1883-ին Պոլսո մեջ, և իր կրթությունը ստացած Աղջկանց ամբիկյան քոլեճը: Մեկն էր առաջին թուրք կիններեն որոնք սնած էին արևմտյան դաստիարակությունը, և զայն փորձած ներարկել նաև ի-

րենց շրջապատին: Փոքր տարիքեն գրականության նվիրված, իր առաջին վեպերը եվրոպական մտքին կնիքը կկրեին: Հետո էր որ ան յուրացուց համաթրքական իդեալը և զայն տարփողեց իր վեպերուն մեջ:

Համաշխարհային առաջին պատերազմին հետո մեծ դեր կատարեց թուրք ազգային շարժման մեջ, այն հնգյակի կողքին որ պիտի հարթեր Մուսթաֆա Քեմալի ճամբան, և ապա գծովելով անոր հետ՝ պիտի հեռանար երկրեն: Ամերիկայի մեջ էր որ թուրք գրագիտուհին 1925-ին պիտի հրատարակեր իր հուշերը անգլերեն լեզվով, անոնց մեջ շոշափելով նաև հայկական խնդիրը և մասնավորապես 1915-ի սարսափները: Այնտեղ մասնավոր գրուի մը հատկացուցած է Կոմիտասին ալ (էջ 370—374), ուր մեզ կպատմե անոր հետ իր առաջին ծանոթությունը թյուրք-Օճաղը հանդեսին մեջ և իր հետագա հանդիպումները անոր հետ, սուտը իրավիճակն ասանած, այսինքն խեղաթյուրելով և հերյուրելով:

Հիմա խոսքը այլևս իրեն տանք որպեսզի պատմե իր հանդիպումը Կոմիտասին հետ թյուրք-Օճաղը ի այդ հանդիսության պահուն, և մեզ ներկայացնեն Կոմիտասը այնպես ինչպես տեսած է զայն «Պոլսեն և Անատոլուեն հավաքած» իր երգերը երգելու ատեն.

«Թյուրք-Օճաղը բեմը և սրահը այդ տարիներուն (1913—1914) բաց էին դասախոսությանց, թատերախաղերու և նվագահանդեսներու համար որոնք սահմանված էին բարձրացնելու ընդհանուր հասարակության ճաշակը: Այստեղ էր որ առաջին անգամ սկսավ խառն ունկնդրությանց սովորությունը: Շնորհիվ այն ատեն Օճախին մեջ եղած երիտասարդներու խոհական և իսկապես կատարյալ կենցաղավարության, այս դեպքը տեղի չտվավ խոսքի կամ քննադատության: Այդ նույն սրահին մեջ էր որ ես ճառ խոսեցա բաղմաթիվ այդ ունկնդիրներու առջև: Մեկ տարվան մեջ այս բանը բոլորովին բնական երևցավ, և ես շատ մը հրապարակային դասախոսություններ ունեցա ամեն տեսակե, Օճախեն ներս ու դուրս:

Այդ սրահին մեջ էր որ ծանոթացա Կոմիտաս վարդապետին,—հայ քահանան, երաժիշտը և երգահանը: Այն մեկն էր համբավավոր այն երաժիշտներեն, դերասաններեն և դասախոսներեն զոր Օճախը կհրավիրեր իր շաբաթական դասախոսությանց: (Կարծիքները բաժնված էին Օճախին մեջ շաբաթական ներկայացումներու ծոպորի մասին: Ոմանք կուգեին որ միայն թրքական բաներ տրվին, իսկ ուրիշներ կայնգեին թե ավելի յայն ազդեցություն պիտի գործեր ծանոթանալ ուրիշ ազգերու գեղեցկությանց և մշակույթին: Այն ատեն հազիբեց այս վերջին տեսակետը:

<sup>12</sup> «Արածանի», Փարիզ, 1940, էջ 66:

<sup>13</sup> Բժիշկ Է. Մանուկյանի 1962 հուլիս 14-ին ինձ սուղած նամակին:

Կոմիտաս մեծ հուշակ հանած էր անատոլյան երգերով և հին Գրիգորյան տաղերու երաժշտութեամբ զոր հավաքած էր տարիներու համբերատար աշխատանքով Կ. Պոլսո և Անատոլիոյ մեջ: Ան երգչախումբ մը մարզած էր հայ երիտասարդներն և մեծ առաջնորդ մը կհամարվեն հայոց մեջ:

Երբ ան երկցավ իր քահանայական սև և երկար վերարկուով, իր մութ դեմքը նույնքան միամիտ որքան ունէ պարզ անատոլոցիի դեմքը, և աչքերը լեցուն այն գորովանքով և կարոտով զոր իր ձայնը կարտահայտեր իր վճիտ կորովի խաղերով, զգացի թե ան մարմնացումն է Անատոլիոյ ֆուլբորին և երաժշտութեան:

Եղանակները անոնք էին զոր հաճախ կերպերն մեր քեմախցի և էրզրումցի սպասավորները: Ան պարզապես հայերենի վերածած էր բառերը, բայց ես որևէ կարևորութիւն չտվի լեզվին. ես միայն զգացի ներքին նշանակութիւնը այդ քնքույշ և թաղծագին մեղեդիին Անատոլիոյ մենավոր տափաստաններեն»:

Խալիդն էդիբ հանրմ պատմելն հետո Կոմիտասի հետ իր առաջին հանդիպումը Թյուրքօճաղլի մեջ, կգրեմ.

«Այդ օրն սկսած ծանոթութիւնը շարունակվեցավ: Կոմիտաս հաճախ իմ տունս կուգար երգելու: Ան կշարունակեր գալ նույնիսկ հայերու և թուրքերու փոխադարձ շարդեն վերջը: Մենք երկուքս լոին կտառապելինք այս վիճակին մեջ, բայց մեզմե ոչ մեկը հիշեց այդ պարագան: Մեհմեդ էմին և Յահյա Քեմալ պեյերը, երկուքն ալ մեծ բանաստեղծներ որոնք միշտ մարդասիրական տեսակետով կըմտնեին ազգայնականութիւնը, կհետաքրքրվեին իր անձնավորութեամբ և կու գային լսելու զինքը: Յուսուֆ Աքչուբա ևս կու գար, մղված իր երաժշտասիրութենէն, բայց կհայտարարեր թե Կոմիտաս մեծ վնաս պատճառած է թուրքին, գողնալով անոր մշակութիւնը երաժշտութեան և երգերու ձևով»:

Խալիդն էդիբ հանրմ հետևելալ կերպով կընեերկացնէ Կոմիտասը իր ամերիկացի ընթերցողներուն.

«Կոմիտաս քեոթահյացի էր և շատ աղքատ ծնողք սերած: Անոնք հայերեն չէին գիտեր և Կոմիտաս զայն սորվեցավ շատ վերջը. իր ծնողները հավանաբար թրքական ծագում ունեին, այն թուրքերեն որոնք Գրիգորյան եկեղեցիին հարած էին: Բյուզանդական վեհապետները թուրք ցեղեր հրավիրած էին, պատվար մը կազմելու համար սարակինոսյան արշավանքներուն դեմ, ու թեև ասոնք մեծ մասով տեղավորված էին հարավային սահմաններուն վրա, բայց ոմանք կրնան այլուր տեղափոխված ըլլալ:

Կոմիտասի ձայնը ուշադրութիւնը գրա-

ված էր Քեոթահյացի հայկական եկեղեցիով արիչներուն և ան շատ կանուխն զրկվեցավ Հոսմ, երաժշտական կրթութիւն ստանալու, ինչպես և քահանա ձեռնադրվելու համար: Հայ ազգայնական մըն էր ան, իր ծագումը թրքական ըլլա թե հայկական, բայց խանկածքով ու սրտով իսկ և իսկ անատոլոցի թուրք մըն էր, թերևս անգիտակից: Իր երաժշտական երակը ժառանգական էր: Կըհիշեմ իր իսկ բառերը որոնք թելը գտնել տվին ինծի: Ան կըսեր.—Մնողքես ժառանգեցի զույգ մը կարմիր կոշիկ և երգ մը: Կոշիկները հորմես էին, բայց երգը մորմես էր. ան հորինեց երաժշտութիւնը և շինեց բառերը: Եղածը պարզ երգ մըն էր երկու ճերմակ աղավիններու մասին, զուտ անատոլյան գավառաբարբառով մինչև այսօր Անատոլիոյ կիներն են որ երգ կհորինեն և ժողովրդային բանահյուսութիւնը կշինեն: Երգը կերթա բերնե բերան և լավագույնը բնականաբար կապրի:

Իբրև մարդ և իբրև արվեստագետ Կոմիտաս հազվագյուտ էր: Իր ճգնավորական կենցաղը, վճիտ և գեղեցիկ պարզութիւնը որով կուսուցաներ հայերուն, շատ լավ կըրնային օրինակվիլ ուրիշ ազգայնականներ: Անատոլուն թե՛ երգով և թե՛ զգացումով արտահայտելու իր եղանակը արժանի էր ունկընդրութեան»:

«Կոմիտաս օր մը Ավե Մարիա երգեց հայերեն որ կպատկաներ Զ դարուն,— կտոր մը հազվագյուտ գեղեցկութեամբ. եղանակին գերագույն հափշտակութիւնը և կրոնական հուզումը այնքան թովեցին զիս որ հարցուցի թե երաժշտութեան վերածած է որևէ սաղմոս»:

— Այո՛, ըսավ, 101-րդ սաղմոսը:

— Կրնայի՞ք երգել. արդյոք շատ հոգնած եք, հարցուցի:

Վարդապետը փոված էր ցած աթոռին վրա, դաշնակին մոտ, և դեմքը ճերմակ էր և լեցուն տառապանքի տարօրինակ գիծերով:

Սկսավ երգել առանց շարժելու աթոռն: Երբ սկսավ երգել, զգացի թե եղանակը ոչինչ ունեիր (քիչ առաջ երգած) Ավե Մայիայի նվիրական ու խոնարհ գեղեցկութենէն: Ան սկսավ իբրև շշուն անեծք մը, ըմբոստ ու զայրալի. մինչ կշարունակեր, համարաբար ոտքի ելավ,—երևելով այնպես ինչպես Մեֆիստոն Յաուսափի մեջ, և հասնելով իր կատարյալ բարձրութեան, երբ կարտասաներ վերջին բառերը: Հետո թեքը բարձրացնելով, դեմքը իբրև ճերմակ բոց մը և աչքերը իբրև սև շանթեր, եղանակը վերջացավ ինչպես թնդուն մը արձագանգող որոտումի: Վախցա և տարօրինակ զգացում մը ունեցա: Բնազդաբար քովի գրակախս քաշեցի Աստ-

վածաշունչը և գտա 101 սաղմոսին վերջին տունը.

Ընդ առաջուս սպանանէի գամենայն մեղաւորս երկրի. զի սատակեցից ի քաղաքի Տեառն գամենեսեան՝ ոյ՛ք գործեն գանձօրէնութիւնս:

Իր հոգիին ատելութեան և վրեժխնդրութեան ազաղակն էր իմ ժողովուրդիս համար: Խելագարութեան և տառապանքի այնպիսի նայվածք մը ունեն որ փորձեցի բացարձակապես հանգարտ ըլլալ, բայց ան սրտնեղած կերևար. գիտեր որ մեկմեկու հոգիներուն մեջ նայած էինք, Մենք իրար կտեսնեինք, հայկական և թրքական արյունով, և հայկական և թրքական տառապանքով, իբրև հարաճուն հեղեղ մը մեր միջև»:

«1915-ին Օճախը վեհանձնաբար իր ազգեցութեանն ի գործ դրավ որպեսզի (Կոմիտաս) ազատ մնա աքսորե. բայց 1916-ին ծանր խանգարում մը ունեցավ մտքին մեջ որ խախտեցավ այդ քստմնելի ժամանակներու ճնշումին տակ: Դոկտ. Ադնան (Խալիդե էտիբ հանրմի ամուսինը) խնդրեց Թալեաթ փաշա-

լին որ արտոնե Փարիզ երթալ դարմանվելու և այս արտոնութեանը տրվեցավ»:

Խալիդե էտիբ չէր կրնար ավելի արտառոց կերպով ավարտել իր ֆանթեզիներուն շարանը: Կոմիտաս Փարիզ փոխադրվեցավ 1919-ի սկիզբը միայն, իսկ Թալեաթ այդ թվականին վաղուց խուլյա տված էր երկրեն...

\* \*

Կոմիտասի Գեթսեմանին պատմած ատեն չէինք կրնար տեղ շտալ իր կյանքի այս դրվագին ալ՝ որ նվազ եղբրական չէր: Անոնք որ զինք կանչեր էին այդ հանդիսութեան՝ որպեսզի անոր բերնեն լսեին թուրքին երգերը, ճիշտ անոնցմե էին որ երեք շաբաթ շանցած Գողգոթա պիտի հաննին հայ մտավորականութեան հեք կարավանը ու Կոմիտասը ևս պիտի խառնեին անոր, որպեսզի, տարիներ հետո, Խալիդե էտիբ հանրմներու բերնով անոր հիշատակն ալ պղծեն սուտերու և խեղաթյուրումներու մեջ:

(Շարունակելի)